ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հաստատված է ամբիոնի նիստում**

պատմության ________________
ամբիոնի անվանումը

Ամբիոնի վարիչ Ֆ.Վ.Մովսիսյան /Ա.Ա.Հ/

Արձանագրություն № __2______

«_13_» _սեպտեմբերի__ 2023_ թ.

# Պ/Բ-016 ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԳԵՆԵԶԻՍԸ

Դասիչ, դասընթացի անվանում

## ԴԱՍԸՆԹԱՑԻ
## ՈՒՍՈՒՄՆԱՄԵԹՈԴԱԿԱՆ ՓԱԹԵԹ

**Մասնագիտություն՝** **022201.00.7 Պատմություն**
/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** **022201.01.7 Պատմություն**
/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** **___________մագիստրոս______________________**
/բակալավր, մագիստրատուրա/

**Ամբիոն՝** **______պատմության________________________**
/ամբիոնի լրիվ անվանումը/

**Ուսուցման ձևը՝** **________առկա ____________________________**
/առկա, հեռակա/

**Կուրս/կիսամյակ** առկա **_առաջին, առաջին կիսամյակ________**

**Դասախոս(ներ)՝** **Արթուր Մելիքյան __________________________**
/անուն, ազգանուն/

էլ. հասցե arthurmelikyan@rambler.ru

Վանաձոր- 2023թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում ........................................ 3
2. Դասընթացի նպատակը և խնդիրները .................................................... 3
3. Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները .................................................... 4
4. Դասընթացի կրթական վերջնարդյունքները ........................................... ...
5. Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի պահանջների ............................................................ ...
6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը ........................................................ ...
7. Ուսումնական աշխատանքները տեսակները ........................................... ...
8. Դասավանդման մեթոդներ.......................................................... ...
9. Ուսումնառության մեթոդները ........................... ...
10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը ............................................................................................ ...
11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ.....................
12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ............................................. ...
    12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ ...
    12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ.................................................... ...
    12.3. Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ.............................................................................. ...
    12.4. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ .......... ...
13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում..................... ...
14. Գնահատում........................................................................ ...
    14.1. Ուսանողների գիտելիքների ստուգում...................................... ...
    14.2. Հարցաշար........................................................................... ...
    14.3. Գնահատման չափանիշներ.................................................... ...
15. Դասընթացի համառոտ նկարագրիչ..................................................... ...

## ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

### 1. Դասընթացի դերը և տեղը կրթական ծրագրում[1].

**«Հին հունական մշակույթի գենեզիսը»** դասընթացը կարևորվում է պատմագիտության բնագավառում մասնագետների պատրաստման գործընթացում, ներառված է «Պատմություն» կրթական ծրագրի ուսումնական պլանի «Հատուկ մասնագիտական» կրթամասում:

Ներկայացված առարկայական փաթեթը կազմված է մագիստրատուրայի ծրագրով բուհական կրթության ծրագրին համապատասխան և նախատեսված է պատմության բաժնի մագիստրատուրայի ուսանողների համար: Այն ընդգրկում է հին հունական մշակույթի առաջացման և զարգացման համապարփակ պատմությունը՝ սկսած Ք. ա. 3-րդ հազարամյակի կեսերից (Էգեյան քաղաքակրթության ձևավորումից) մինչև Ք. ա. 4-րդ դ. (հելլենիստական դարաշրջանի սկիզբը): Ընդ որում, ծրագիրը ներառում է հին հունական մշակույթի բոլոր բնագավառները՝ ճարտարապետություն, կերպարվեստ, կիրառական արվեստ, գիր ու գրականություն, հոգևոր մշակույթի տարրեր և հոգեբանություն, թաղման ծեսեր ու ժողովրդական հանդիսություններ և այլն:

§Հին հունական մշակույթի գենեզիսը¦ առարկայի ծրագիրը կազմվել է ելնելով այն դրույթից, որ յուրաքանչյուր մշակույթ հանդիսանում է այն ստեղծող ժողովրդի կյանքի և ինքնարարման պրոցեսի յուրօրինակ հայելին, նրա ստեղծած քաղաքակրթական ամբողջի վերնաշենքային դրսևորումը: Հետևաբար, այս կամ այն ժողովրդի պատմությանը առավել խորությամբ ծանոթանալու, համաշխարհային պատմության մեջ նրա տեղը և դերը իրատեսորեն գնահատելու համար անհրաժեշտ է քաղաքական պատմությունից զատ՝ համակողմանիորեն քննության առնել նաև նրա ստեղծած մշակույթը: Դա մասնավորապես վերաբերում է հին հույներին ու նրանց ստեղծած ինքնատիպ ու հարուստ մշակույթին, որն իր սկիզբն առնելով դեռ վաղ պատմական դարաշրջանում, և դարերի ընթացքում հարստանալով և հղկվելով օտար մշակույթների հետ փոխազդեցությամբ, դարձավ մշակութային զարգացման մակարդակի յուրօրինակ չափանիշ: Հին հունական մշակույթի ծագման և զարգացման հիմնախնդիրները պատմաբանի համար կարևորվում են նաև այն առումով, որ մարդկության պատմության հետագա դարերի ընթացքում այս մշակույթը ևս երկու անգամ բացառիկ դեր կատարեց՝ նախ դառնալով հելլենիստական քաղաքակրթության և մշակույթի ստեղծման կարևոր ազդակներից մեկը, իսկ ավելի ուշ ընկավ եվրոպական վերածննդի հիմքում:

### 2. Դասընթացի նպատակը և խնդիրները.

**2.1.**Դասընթացի նպատակն է.

- Հին հունական մշակույթի սկզբնավորման և զարգացման օրինաչափությունննների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:
- Ուսանողների մոտ հին հունական մշակույթի հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում:

[1] Ներկայացվում է դասընթացի կարևորությունը տվյալ կրթական ծրագրի խնդիրների լուծման հարցում և տեղը ուսումնական պլանում ըստ կրթաբլոկների

- Հին մշակույթների համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:
- Տարբեր իրավիճակներում հին հունական մշակութային փորձը վերլուծելու կարողությունների ձևավորում:

**2.2.**Դասընթացի խնդիրներն են.
- Սովորեցնել հին հունական մշակույթի պատմության տեսական հիմքերը:
- Բացատրել հին հունական մշակույթի պատմական զարգացման օրինաչափությունները:
- Ամրապնդել ուսանողների կողմից ձեռքբերված տեսական գիտելիքները գործնական իրավիճակային խնդիրներով:
- Սովորեցնել ուսանողներին կատարել հին հունական մշակույթի պատմության վերաբերյալ հետազոտություններ և կատարել եզրահանգումներ ըստ արդյունքների:
- Սովորեցնել ուսանողներին վերլուծել անտիկ մշակութային համալիրների ձևավորման, զարգացման, ճգնաժամի և անկման առանձնահատկությունները համաշխարհային մծակույթի պատմության համատեքստում:

3. **Դասընթացին մասնակցելու նախնական մուտքային գիտելիքները, կարողությունները և հմտությունները**

«Հին հունական մշակույթի գենեզիսը» դասընթացին մասնակցելու կարևոր նախապայման է ուսանողների գիտելիքների և հմտությունների առկայությունը «Պատմություն» մասնագիտության բակալավրի կրթական ծրագրում ուսուցանվող «Հին Հունաստանի և Հռոմի պատմություն», «Հին Արևելքի պատմություն», «Հնագիտություն» դասընթացներից:

## 4. Դասընթացը ձևավորում է հետևյալ կրթական վերջնարդյունք(ներ)ը[2] և /կամ կոմպետենցիաները.

**«**Հին հունական մշակույթի գենեզիսը**»** դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.

1. իմանա հին հունական մշակույթի պատմության տեսական հիմունքները,
2. իմանա հին հունական մշակույթի ուսումնասիրման մեթոդական հիմքները,
3. կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ պատմամշակութային իրողությունները հասկանալու, փաստերն ու

[2] http://www.vsu.am/karg/ararkayakan-nkaragir-17.pdf
Լրացվում է «Առարկայի նկարագրի մշակման ռազմավարության» կոմպետենցիաների ցանկին համապատասխան:

երևույթները համեմատելու, մշակույթի զարգացման փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու համար,

4. կարողանա համադրել անտիկ մշակույթի պատմության տարբեր շրջափուլերում ի հայտ եկած քաղաքական, տնտեսական, հասարակական-պետական ազդակներ դերը, մշակութային կառույցներն ու գաղափարաբանությունները, վեր հանել դրանց փոխակերպությունների և մշակութային համալիրում արտահայտվելու առանձնահատկությունները,
5. կարողանա համակարգել հին հունական մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, դրանք ենթարկել տեսական վերլուծության, փաստարկել սեփական դիրքորոշումը և կատարել ինքնուրույն հետևություններ,
6. կարողանա վերլուծել մշակութային գործընթացները, դրանց տրամաբանությունը, օրինաչափությունները, ոճերի ու միտումների հարափոփոխի պատճառա-հետևանքային կապերը,
7. կարողանա ձևավորել դիրքորոշումներ անտիկ մշակույթի պատմության հիմնախնդիրների նկատմամբ և կատարել դրանց հետազոտություն:

**Դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողը ձեռք կբերի հետևյալ կոմպետենցիաները.**

**Ա)Ընդհանրական կոմպետենցիաներ**

**Գործիքային կոմպետենցիաներ (ԳԿ)՝**

**ԳԿ1** վերլուծելու և սինթեզելու ունակություն,
**ԳԿ9** խնդիրների լուծում,
**ԳԿ10** որոշումների ընդունում:

**Համակարգային կոմպետենցիաներ (ՀԳԿ)՝**

**ՀԳԿ1** գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն,
**ՀԳԿ2** հետազոտություններ կատարելու ունակություններ,
**ՀԳԿ3** սովորելու ունակություն,
**ՀԳԿ8** ինքնուրույն աշխատելու ունակություն,

**Բ)Առարկայական (մասնագիտական) կոմպետենցիաներ (ԱԿ)**

**ԱԿ2** հստակ հաղորդել ստացված հենքային գիտելիքները,
**ԱԿ4** ցուցաբերել առարկայի ընդհանուր կառուցվածքի և առանձին մասերի միջև կապերի իմացություն,
**ԱԿ6** կիրառել տվյալ առարկային բնորոշ մեթոդները,
**ԱԿ11** տիրապետեն ինքնուրույն հետազոտության մեթոդներին և կարողանան մեկնաբանել հետազոտության արդյունքները,
**ԱԿ14** տիրապետեն տվյալ մասնագիտական մակարդակում պահանջվող կոմպետենցիաներին:

***5.*** **Դասընթացի դերը կրթական ծրագրի շրջանավարտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման հարցում ըստ աշխատաշուկայի**

պահանջների[3].

«Հին հունական մշակույթի գենեզիսը» դասընթացից ձեռք բերված գիտելիքներն և հմտությունները շրջանավարտը կարող է կիրառել պատմաբանի մասնագիտական գործունեության ընթացքում, թանգարաններում աշխատելու, նաև ասպիրանտուրայում կրթությունը շարունակելու և գիտական հետազոտություններ կատարելու նպատակով:

## 6. Դասընթացի ծավալը, ուսումնական աշխատանքի տեսակները, արդյունքների ամփոփման ձևերը

| Չափանիշ | Առկա ուսուցման համակարգ | Հեռակա ուսուցման համակարգ |
|---|---|---|
| Դասընթացի ընդհանուր աշխատատարությունը (կրեդիտ /ընդհանուր ժամաքանակ) | 5 կրեդիտ/150 ժամ | |

| Աշխատանքի տեսակը | ժամաքանակ | ժամաքանակ |
|---|---|---|
| Դասախոսություն | 42 | |
| Գործնական աշխատանք | | |
| Սեմինար պարապմունք | 18 | |
| Լաբորատոր աշխատանք | | |
| Ինքնուրույն աշխատանք | 90 | |
| **Ընդամենը** | 150 | |
| Ստուգման ձևը՝ ընթացիկ քննություն | | |

7. Ուսումնական աշխատանքների տեսակները[4] .

- **Դասախոսությունը** դասախոսի կողմից դասընթացի ծրագրի շրջանակներում գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Դասախոսը վերլուծում, մեկնաբանում է թեմայի առավել կարևոր, դժվար ընկալելի, հանգուցային հարցերը: Դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ: Դասախոսը պետք է խթանի ուսանողի ակտիվ իմացաբանական գործունեությունը, նպաստի նրանց ստեղծագործական մտածողության ձևավորմանը: Ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից: Ուսանողը դասախոսությանը

[3] Նշվում է, թե տվյալ դասընթացի յուրացման, ամփոփման արդյունքում ձեռքբերված գիտելիքները, հմտությունները և կարողությունները աշխատաշուկայի որ բնագավառներում և ոլորտներում կարող է շրջանավարտը կիրառել

[4] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

ներկայանալուց առաջ պետք է ծանոթացած լինի տվյալ դասին ներկայացվող թեմային, որպեզի կարողանա մասնակցել ուսումնական գործընթացին:

- **Սեմինար պարապմունքները** խմբային պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Սեմինարի ընթացքում ուսանողները քննարկում, պատասխանում են թեման, զեկույցները և ռեֆերատները, որոնք հանձնարարել է դասախոսը:
Սեմինարին պատրաստվելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել հիմնական և լրացուցիչ գրականություն տվյալ թեմայով: Գրականության ուսումնասիրությունից և համառոտագրումից հետո պետք է կազմել պլան՝ բանավոր պատասխանի համար, ապա մտածել ելույթի բովանդակությանհարցադրումների և պատասխանների մասին:

- **Ինքնուրույն աշխատանքը** ուսանողների ուսումնական, գիտահետազոտական աշխատանքն է, որն իրականացվում է դասախոսի առաջադրանքով և մեթոդական ղեկավարությամբ, բայց առանց նրա անմիջական ղեկավարության:
Ինքնուրույն աշխատանքի տեսակներն են[5]՝
    - Ռեֆերատ – ուսանողների ինքնուրույն գրավոր, որտեղ ուսանողը շարադրում է որևէ հարցի կամ թեմայի էությունը՝ հենվելով գրական աղբյուրների վրա (դասագրքեր, ձեռնարկներ և այլն):
    - Գործարար խաղեր – պայմանական իրավիճակներում սոցիալ-տնտեսական համակարգերի և մարդկանց մասնագիտական գործունեության կառավարման գործընթացների նմանակեղծային մոդելավորում՝ առաջացող հիմնախնդիրների ուսումնասիրման և լուծման նպատակով:
    - Կլոր սեղան – ինքնուրույն աշխատանքի ձևին բնորոշ է թեմատիկ բանավեճի համադրումը խմբային աշխատանքի հետ:
    - Կոնկրետ իրավիճակների վերլուծություն – ուսանողների ակտիվ գործունեության կազմակերպման ամենաարդյունավետ և տարածված ձևերից մեկն է, որը զարգացնում է մասնագիտական և կեցությանը վերաբերող տարբեր հարցերի վերլուծության կարողությունը:
    - Նախագծերի մեթոդ – ուսումնաճանաչողական, ստեղծագործական կամ խաղային համատեղ գործունեության տեսակ է, սովորող-գործընկերների միջև, որոնք ունեն ընդհանուր նպատակ և համաձայնեցված միջոցներ՝ ուղղված որևէ խնդրի լուծման կամ որոշակի արդյունքի ձևակերպման:
    - Հարցի նախապատրաստման մոդել –կամավորության սկզբունքով ընտրված ուսանողն իր նախընտրած հակիրճ ձևով նախապատրաստում է տվյալ առարկայից քննության կամ ստուգարքի հարցերի իր պատասխանների փաթեթը: Քննությունից (ստուգարքից) 1 շաբաթ առաջ նա հանձնում է փաթեթը դասախոսին, որը ստուգում է այդ նյութերը և որոշում դրանց համապատասխանությունը տվյալ առարկայի բովանդակությանը:
    - Ինքնուրույն աշխատանք համացանցում – նոր տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են օգտագործվել հետևյալ նպատակներով՝ համացանցում անհրաժեշտ տեղեկատվության որոնման համար, երկխոսություն համացանցում, թեմատիկ ցանցային էջերի օգտագործում:
    - Աշխատանքային տետր – նախատեսված է ուսանողների ինքնուրույն աշխատանքների համար և թույլ է տալիս գնահատել ուսումնական նյութի յուրացման աստիճանն ուսանողների կողմից:
    - Զեկույց – որևէ գիտական կամ հետազոտական թեմայի շուրջ կատարած եզրակացությունների, ստացած արդյունքների ներկայացում ուսանողի կողմից:

[5] Թողել այն տեսակը, որը տվյալ դասընթացի դասավանդման համար նախատեսված է: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

- **<u>Հարցազրույց</u>** – վերահսկողության միջոց, որը կազմակերպվում է որպես հատուկ զրույց դասավանդողի և ուսանողների միջև՝ կապված այնպիսի թեմայի հետ ինչպիսին կարգապահությունն է, և նախատեսված է հստակեցնել ուսանողների գիտելիքների շրջանակը կոնկրետ թեմայի, հարցի վերաբերյալ:

8. **Դասավանդման մեթոդներներն են՝**[6] հիմնահարցային դասախոսություն, դասախոսություն-երկխոսություն, դասախոսություն-քննարկում, *թեմատիկ սեմինար*, սեմինար-բանավեճ, գործնական աշխատանք՝ անհատական աշխատանք, գործնական աշխատանք՝ խմբային աշխատանք, ուսուցում գործողությամբ (action learning), իրավիճակային խնդիրների վերլուծություն, գործարար խաղեր և այլք:

9. **Ուսումնառության մեթոդներն են**[7]՝ մտքերի քարտեզագրում, թիմային քննարկում, իրադրությունների վերլուծություն, ալգորիթմների և հրահանգների կազմում, աղյուսակների և դասակարգման համեմատման և համակարգման սխեմաների կազմում, փորձի/հետազոտության արդյունքների վերաբերյալ եզրակացության ներկայացում....

[6] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:
[7] Ներկայացված են օրինակներ: Դասավանդողը կարող է նկարագրությունը փոխել կամ լրացումներ կատարել:

## 10. Դասընթացի համառոտ բովանդակությունը, ուսումնական աշխատանքի ծավալը՝ ըստ բաժինների և թեմաների[8].

| h/h | Թեմա (բաժին) | Ուսումնական աշխատանքի ժամաքանակն ըստ տեսակների | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | դասախոսություն | սեմինար պարապմունք | գործնական աշխատանք | լաբորատոր աշխատանք | Ինքնուրույն աշխատանք |
| 1. | Հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները. | 4 | | | | 2 |
| 2. | Կրետեական մշակույթը | 4 | | | | 2 |
| 3. | Միկենյան մշակույթը | 4 | | | | 2 |
| 4. | Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: §Մութ դարաշրջանի¦ հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը: | 4 | | | | 2 |
| 5. | Հին հունական գրականության ակունքները: Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը | | 4 | | | 2 |
| 6. | Հունական արվեստի §Արևելյան ոճի¦ ժամանակաշրջանը: | 4 | | | | 2 |
| 7. | Արխաիկ դարաշրջանի հունական արվեստը: | 4 | | | | 2 |
| 8. | Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները: | 4 | | | | 2 |
| 9. | Հունական գրականությունը Ք.ա 7-5-րդ դարերում: | | 4 | | | 4 |
| 10. | Դասական դարաշրջանի հունական արվեստը: | 4 | | | | 4 |
| 11. | §Ֆիդեասի դարաշրջան¦-ի հունական ճարտարապետությունն ու արվեստը | 4 | | | | 2 |
| 12. | Հունական դրամատուրգիայի §ոսկեդարը¦: | | 4 | | | 8 |
| 13. | Ք.ա. 4-րդ դարի հունական արվեստը: | 4 | | | | 4 |
| 14. | Դասական դարաշրջանի հունական պատմական արձակը: | | 4 | | | 4 |

[8] Նման է օրացուցային պլանին

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 15. | Հունական մշակույթի կերպափոխությունները հելլենիստական դարաշրջանում | 2 | 2 | | | 6 |
| 16. | **ԸՆԴԱՄԵՆԸ** | 42 | 18 | | | 90 |

## 11. Ուսումնամեթոդական գրականության ապահովման քարտ

| հ/հ | Անվանումը/հեղինակ | Հրատարակության տարի |
|---|---|---|
| **Պարտադիր գրականություն (ՊԳ)** | | |
| 1. | Հոմերոս, Իլիական | Երևան, 1987 |
| 2. | Հոմերոս, Ոդիսական | Երևան, 1988 |
| 3. | Հերոդոտոս, Պատմություն, | Երևան, 1985 |
| 4. | Савельев А., Культура Древней Греции, | М., 2008 |
| 5. | Louise Hitchcock, Aegean Prehistoric Cultures: Minoan Culture, The Oxford Companion to Archaeology, pp. 9-13 | Oxford, 2012 |
| 6. | Nash Th., Creta Capta: Late Minoan II Knossos in Mycenaean History | Wellington, 2017 |
| 7. | Wright J., The Formation of Mycenaean Palase, in Ancient Greece: From the Mycenaean Palaces to the Age of Homer, edited by Sigrid Deger-Jalkotzy and Irene S. Lemos, Edinburgh Leventis Studies 3, Edinburgh University Press 2006, pp. 7-52. | Edinburgh 2006 |
| 8. | Kelder J. M., The Kingdom of Mycenae A Great Kingdom in the Late Bronze Age Aegean, | Bethesda, Maryland 2010 |
| 9. | Louise Hitchcock “Architecture, Mycenaean” in Eric H. Cline (ed) The Oxford Handbook of the Bronze Age Aegean (3000-1000 BCE). Oxford University Press, (2010), 200-209. | Oxford, 2010 |
| 10. | Суриков И., История и культура Древней Греции, | М., 2009 |
| 11. | Хаммнд Н., История Древней Греции | М. 2008 |
| 12. | Кузищин В. И., История Древней Греции | М. 2016 |

| | | |
|---|---|---|
| 13. | Попов А. А., Банников А. В., История и культура Древней Греции, | Санкт-Петербург, 2014 |
| 14. | Ляпустин Б. С., Суриков И. Е., Древняя Греция | М., 2007 |
| 15. | Белох Ю., Греская история | М., 2009 |
| 16. | Егоров А., История Древней Греции | «Издательство СПбПДА», 2014 |
| 17. | Павсаний, Описание Эллады, т. 1-2 | М., 2002 |
| 18. | Античная Греция, под ред. Е.Ц. Голубцова и др., т. 1-2, | М., 1983 |
| 19. | Режабек Е., Агон как имманентная характеристика культуры Древней Греции, Вестник ДГТУ. 2011. Т. 11, No 6(57), с. 910-917 | |
| 20. | Ðàäöèã Ñ.È., Èñòîðèÿ äðåâíåãðå÷åñêîé ëèòåðàòóðû, ñòð. 28-37, 50-115. | Ì., 1969 |
| 21. | Øòàëü È.Â., ×åëîâåê â ïîýìàõ Ãîìåðà (ïóòè ýïè÷åñêîãî èçîáðàæåíèÿ), Ïðîáëåìû Àíòè÷íîé èñòîðèè è êóëüòóðû, òîì 2, ñòð. 137-193. | Åðåâàí, 1979 |
| 22. | Ãîðäåçèàíè Ð.Â., ,, Èëèàäà,, è ,,Îäèññåÿ,, - ïàìÿòíèêè ïèñüìåííîñòè, Àíòè÷íîñòü êàê òèï êóëüòóðû, îòâ. ðåä. Ëîñåâ À.Ô., ñòð. 146-166. | Ì., 1988, |
| 23. | Ôðåéáåðã Ë.À., Ðàííèé ïåðèîä ãðå÷åñêîé ëèòåðàòóðíîé êðèòèêè, Äðåâíåãðå÷åñêàÿ ëèòåðàòóðíàÿ êðèòèêà, ñòð. 10-24.<br>Առաքելյան Ա., Հունական գրականության պատմություն, Երևան, 1962 | Ì., 1975, |
| 24. | Անտիկ, միջնադարյան, վերածննդի գրականություն, I, (Անտիկ գրականություն) | ºñ¨³Ý, 1990, |
| 25. | Тахо-Годи А., Греческая мифология | М., 1989 |
| 26. | Кошеленко Г., Греский полис на эллинистическом Востоке | М., 1979 |
| 27. | Шлюмберже Д., Эллинизированный Восток, | М. 1985 |
| | **Լրացուցիչ գրականություն(ԼԳ)** | |
| 1. | Лурье С., Язык и культура Микенской Греции | М., 1957 |
| 2. | Õðåñòîìàòèÿ ïî èñòîðèè äðåâíåé Ãðåöèè,ïîä ðåä. Ä.Ï. Êàëèñòîâà, | М., 1964 |
| 3. | Áîííàð À., Ãðå÷åñêàÿ öèâèëèçàöèÿ, òò. 1-2 | Ì., 1958-1962 |
| 4. | Øòàåðìàí Å.Ì., Êðèçèñ àíòè÷íîé êóëüòóðû | М., 1975 |
| 5. | Фукидид, История, | М., 1999 |
| 6. | Диоген Лаертский, О жизни, учениях и изречениях знаменитих философов | М., 1986 |
| 7. | Տրոնսկի Ի., Անտիկ գրականության պատմություն | Երևան, 1949 |
| 8. | Шанин Ю., Критика агонистической ограниченности в эллинской поэзии 7-6 вв. До н. Э., Проблемы Античной истории и культуры, том 2, Ереяан 1979 | |
| 9. | Драч В., Агонистика и ,,человек агональный,, в культуре Древней Греции, См. Личность, | М., 2009, |

| | | |
|---|---|---|
| | Культура, Общество, том 11, вып. 2, | |
| 10. | Ярхо В., Трагический театр Софокла, См. Софокл, Драмы, Приложения, с. 467-508. | М., 1990, |
| 11. | Հին հունական ողբերգություններ, թարգմ. բն. Հ. Համբարձումյանի, Ս. Կրկյաշարյանի, Ա. Թոփչյանի, | Երևան, 1990 |
| 12. | Էսքիլոս, Ողբերգություններ, թարգմ. Ա. Թոփչյանի, | Երևան, 1991 |
| 13 | Тарн В., Эллинистическая цивилизация | М., 1949 |
| | **Համացանցային տեղեկատվական պաշարներ (ՀՏՊ)/ Էլեկտրոնային աղբյուրներ (ԷԱ)** | |

## 12. Դասընթացի ուսումնամեթոդական քարտ

### 12.1. Դասախոսությունների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Գրականություն[9] |
|---|---|---|---|---|
| 1. | *Հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները.* | Հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները. Հերոդոտոսի, Պլինիուս Ավագի, Պավսանիասի, Վիտրուվիոսի և այլոց վկայությունները: Հնագիտական ուսումնասիրությունները, բանահյուսական տվյալները: | 4 | ՊԳ. 4, 5, 10, 11, 12, 13, 14 |
| 2. | Կրետեական մշակույթը | Հունական մշակույթի ակունքները: Պալատական քաղաքակրթության առաջացումը: Պալատական մշակույթն ու նրա առանձնահատկությունները. Կորնթոս, Ագիյա-Տրիադա, Մալի, Պալեկաստրո և այլն: Կրետեական ճարտարապետությունն ու արվեստը Ք.ա. 3-2-րդ հազարամյակներում: Կրետեական կրոնը և նրա ազդեցությունը հունական կրոնական | 4 | ՊԳ. 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15 ԼԳ 1, 2 |

[9] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | պատկերացումների ձևավորման գործում: | | |
| 3. | Միկենյան մշակույթը | Միկենյան ճարտարապետությունն ու արվեստը Ք.ա. 2-րդ հազարամյակում. Մի-կենք, Տիրինթոս, Արգոս, Պիլոս: Միկենյան մշակույթի աղերսները կրետեական և առաջավորասիական մշակույթների հետ: Կրետե-միկենյան գիրը: | 4 | ՊԳ. 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, ԼԳ 1, 2 |
| 4. | Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: §Մութ դարաշրջանի¦ հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը: | Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: §Մութ դարաշրջանի¦ հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը: §Մութ դարաշրջանի¦ ժամա-նակագրական (պատմագիտական) և մշակութաբանական պատկերացումները: §Մերձմիկենյան¦, §նախաերկրաչափական¦ և §երկրաչափական¦ ոճերը: Հունական սափորանկարչության §դիպիլոնյան¦ ոճն ու նրա հետագա զարգացումը: | 4 | ՊԳ. 4, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12, 13, 14, 15, ԼԳ 1, 2 |
| 5. | Հունական արվեստի §Արևելյան ոճի¦ ժամանակաշրջանը | Արևելյան արտադրանքի ներմուծումը Հունաստան և դրա մասսայական պատ-ճենման պատճառները: Արևելյան ոճերի տեղայնացման և տեղական ավանդույթների հետ համակցման առաջին փորձերը խեցեգործության և արվեստի բնագավառներում: | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 3 |
| 6. | Արխաիկ դարաշրջանի հունական արվեստը | Արխաիկ դարաշրջանի հունական ճարտարապետությունը. դորիական, էոլիական և հոնիական ոճերը: Արխաիկ դարաշրջանի հունական նկարչությունը: Հունական սափորանկարչության §կարմրապատկեր¦ և §սևապատկեր¦ ոճերը: | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 18 |
| 7. | Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները: | Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները: Կլոր քան-դակը՝ կուրոսներ և կորաներ: Արխաիկ դարաշրջանի հունական բարձրաքանդակը: Հունական տաճարների ֆրիզային, մետոպային և ֆրոնտոնային զարդաքան- | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 18 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | դակները: | | |
| 8. | Դասական դարաշրջանի հունական արվեստը | Դասական դարաշրջանի ժամանակագրական (պատմագիտական) և մշակութաբանական ընկալումները: Հունական արվեստի զարգացման §Խիստ ոճի¦ ժամանակաշրջանը: §Խիստ ոճի¦ հունական նկարչությունը. Պոլիգնոտես: §Խիստ ոճի¦ հունական քանդակագործությունը: Զևսի տաճարը Օլիմպիայում: | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 7 |
| 9. | §Ֆիդեասի դարաշրջան¦-ի հունական ճարտարապետությունն ու արվեստը | §Ֆիդեասի դարաշրջանի¦ հունական ճարտարապետությունը. Աթենական ակրոպոլիսն ու Պարթենոնը: Քանդակագործությունը. Աթենասի ու Զևսի արձանները: Պոլիկլետոս, Պեոնիոս: Դասական դարաշրջանի հունական նկարչությունը: | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 7 |
| 10 | Ք.ա. 4-րդ դարի հունական արվեստը: | Ք.ա. 4-րդ դարի հունական արվեստը: Ճարտարապետությունը, քանդակագործությունը. Սկոպաս, Լեոնարքոս, Լիսիպոս: Ք.ա. 4-րդ դարի հունական պատկերաքանդակն ու նկարչությունը: Դասական դարաշրջանի հավասարակշռության խախտումը և պաթետիկ տրամադրությունների հաստատումը արվեստի մեջ: | 4 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 5, 7 |
| 11. | Հունական մշակույթի կերպափոխությունը հլլենիստական դարաշրջանում | | 2 | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 16, 18, 26, 27, ԼԳ 2, 13 |

### 12.2. Գործնական աշխատանքների /սեմինար պարապմունքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | *Թեմա* | Ուսումնասիրվող հարցեր | *Ժամաքանակ* | Ստուգման ձևը | Գրականություն[10] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հին հունական գրականության ակունքները: Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը | Հին հունական գրականութ-յան ակունքները: Ժողովրդ-ական-պոետիկ ստեղծագոր-ծությունն ու առասպելա-բանությունը: Հեքիաթները, առակները (Էսոպոս), հա-նելուկներն ու ասույթները: Ժողովրդական երգերը, դրանց ծագումն ու ձևերը: Հունական հերոսների մասին ավանդապատումներն ու երգերը. աեդոսներն ու ռապսոդները: Հոմերիդները: Տրոյական պատերազմի մասին ավանդությունը: §Իլիականի¦ և §Ոդիսականի¦ համառոտ բովանդակությունը: Պոեմի ընդհանուր բնույթը և գլխավոր կերպարները: Էպի-կական ոճի առանձ-նահատկությունները: §Իլիա-կան¦ և  §Ոդիսական¦ պոեմների հեղինակի հարցը հնում և մեր օրերում: Պոեմի ստեղծման ժամանակը: Հո-մերոսի ինքնության հարցը: Ցիկլյան պոեմներ, հոմե-րոսյան հիմներ, պարո-դիաներ: Դիդակտիկ պոեմ- | 4 | | ՊԳ. 1, 2, 3, 4, 10, 11, 12, 19, 20, 21, 22, 23, 24, 25, ԼԳ 1, 2, 3, 7 |

[10] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ներ. Հեսիոդոսը և աշխա-<br>տանքի գաղափարա-<br>խոսությունը: Թեոգոնիա: | | | |
| 2. | Հունական գրականությունը Ք.ա 7-5-րդ դարերում: | Հունական գրականությունը Ք.ա 7-5-րդ դարերում: Հունա-<br>կան քնարական պոեզիան և նրա ձևերը: Էլեգիան, յամբը և նրանց ներկայացուցիչները (Կալլինոս, Տիրթեոս, Արքիլոքոս, Սիմոնիդես Ամորգացի, Միմներմոս, Սոլոն, Թեոգնիդես): Մելոսյան բանաստեղծություն (Ալքայոս, Սապֆո, Անա-<br>կրեոն): Խորային քնար-<br>երգությունը (խմբերգությու-<br>նը). Պինդարոս: Գիտության և արձակ գրականության սկզբնավորումը: Հունական դրամայի առաջացումը և նրա տեսակները: Առաջին ողբերգակ բանաստեղծները և հունական ողբերգության ընդհանուր բնութագիրը: Հունական թատրոնի կառուցվածքը. դերասաններն ու հանդիսատեսը: | 4 | | ՊԳ. 3, 4, 10, 11, 12, 19, 20, 21, 22, 23, 24, 25, ԼԳ 1, 2, 3, 7 |
| 3. | Հունական դրամատուրգիայի §ոսկեդարը¦: | Հունական դրամատուրգիայի §ոսկեդարը¦: Էսքիլեսն ու նրա ժամանակը: Էսքիլեսի ստեղծագործությունները: Էսքիլեսի սոցիալ-<br>քաղաքական և հայրենասի-<br>րական պատկերացումները: Էսքիլեսի կրոնական և բա-<br>րոյագիտական հայացքները: | 4 | | ՊԳ. 10, 11, 12, 19, 20, 21, 22, 23, 24, 25, ԼԳ 7, 8, 9, 10, 11, 12 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ճակատագրի ու անհատի փոխհարաբերության հարցը Էսքիլեսի ստեղծագործության մեջ: Սոֆոկլեսի ստեղծագործություններն ու դրանց ընդհանուր բնութա-գիրը: Սոֆոկլեսի սոցիալ-քաղաքական հայացքները: Սոֆոկլեսի կրոնական և բա-րոյագիտական հայացքները: Ճակատագրի ու անհատի փոխհարաբերությունը Սոֆոկլեսի ստեղծագործութ-յուններում: Էվրիպիդեսի ստեղծագործություններն ու դրանց ընդհանուր բնութագիրը: Էվրիպիդեսի կրոնական-բարոյագիտական հայացքները: Արիստոֆանեսն ու կոմեդիայի ժանրի ծաղկումը | | | |
| 4. | Դասական դարաշրջանի հունական պատմական արձակը: | Դասական դարաշրջանի հու-նական պատմական ար-ձակը: Հերոդոտոսն ու նրա §Մուսաները¦: Հերոդոտոսի §Պատմության¦ գիտական և գեղարվեստական նշանա-կությունը: Թուկիդիդեսն ու նրա պատմական աշխա-տությունը. փաստարկվա-ծություն, ռացիոնալիզմ, գե-ղարվեստական ուժ: Քսենո-ֆոնն ու նրա աշխատութ-յունները: Լակոնասիրութ- | 4 | | ՊԳ. , 3, 4, 10, 11, 12, 13, ԼԳ 2, 3, 5, 7 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | յունն ու միապետական գաղափարները: Քսենոֆոնի աշխատությունների պատմագեղարվեստական նշանակությունը: Կտեսիաս Կնիդացի և Կրատտիպոս: Իոն, Ստեսիմբրոտոս, Ֆիլիստոս և Տիմեոս: | | | |

## 12.2Լաբորատոր աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

## 12.3. Ինքնուրույն աշխատանքների ուսումնամեթոդական քարտ

| հ/հ | Ինքնուրույն աշխատանքի թեմաները | Աշխատանքի տեսակը[11] | Ներկայացման ժամկետները | Ստուգման ձևը | Գրականություն[12] |
|---|---|---|---|---|---|
| 1. | Զևսի տաճարը Օլիմպիայում | ռեֆերատ | Ուս. Կիսամյակի վերջ | Բանավոր ներկայացում | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 7 |
| 2. | Աթենքի Ակրոպոլիսը | ռեֆերատ | Ուս. Կիսամյակի վերջ | Բանավոր ներկայացում | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 7 |
| 3. | Ապոլոնի տաճարը Դելփիքում | ռեֆերատ | Ուս. Կիսամյակի վերջ | Բանավոր ներկայացում | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 15, 16, 17, 18, ԼԳ 2, 3, 7 |
| 4. | Մավզոլի դամբարանը | ռեֆերատ | Ուս. Կիսամյակի վերջ | Բանավոր ներկայացում | ՊԳ. 4, 10, 11, 12, 13, 14, 16, 18, 26, 27, ԼԳ 2, 13 |
| 5. | Արիստոտելի ,,Պոետիկան,, | ռեֆերատ | Ուս. Կիսամյակի վերջ | Բանավոր ներկայացում | ՊԳ. 10, 11, 12, 19, 20, 21, 22, 23, 24, 25, ԼԳ 7, 8, 9, 10, 11, |

## 13. Դասընթացի նյութատեխնիկական միջոցների ապահովում[13]

[11] Տես 7-րդ կետի հինգերորդ պարբերությունը
[12] Ըստ 12-րդ կետում նշված ցանկի, օր.՝ ՊԳ 1, ԼԳ 2 և այլն
[13] Նշվում են սարք-սարքավորումների, համակարգչային ծրագրերի նկարագրությունները և քանակը, որոնք անհրաժեշտ են տվյալ դասընթացի ուսումնական գործընթացը կազմակերպելու համար

| Ռեսուրսի անվանումը | Ռեսուրսի անվանումը, քանակը, նկարագրությունը (անհրաժեշտության դեպքում) |
|---|---|
| Լսարան (հատուկ կահավորմամբ) | Պրոյեկտոր, |
| Նյութեր լաբորատոր աշխատանքների համար | |
| Սարքեր, սարքավորումներ | համակարգիչ |
| Համակարգչային ծրագրեր | |
| Այլ | |

## 14. Գնահատում

Համալսարանում գործում է բակալավրիատի, մագիստրատուրայի և ասպիրանտուրայի ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոնային համակարգ, որի կիրառկման հիմնական նպատակներն են՝

- կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, ապահովել գիտելիքների համակողմանի ստուգում, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը,
- իրականացնել ինքնուրույն առաջադրանքների, ընթացիկ ստուգումների (ստուգարքներ և քննություններ), ուսումնական գործընթացի այլ բաղադրիչների հաշվառում հետադարձ կապի արդյունավետ մեխանիզմների ներմուծման միջոցով՝ ի նպաստ ուսումնառության գործընթացի բարելավման:

Համալսարանում գնահատման գործընթացը կանոնակարգվում է համաձայն գործող կարգի[14]:

### 14.1. Գիտելիքների ստուգման և գնահատման բաղադրիչներն են՝

- գործնական (սեմինար) և լաբորատոր աշխատանքների ընթացքում նրա ակտիվության և հմտությունների հաշվառում և գնահատում ընթացիկ ստուգումների միջոցով՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ինքնուրույն աշխատանքների (անհատական առաջադրանքներ) հաշվառում և գնահատում առավելագույնը գումարային 20 միավոր,
- դասընթացի ենթաբաժինների և ծրագրով նախատեսված այլ առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ կամ ստուգարքներ)՝ առավելագույնը գումարային 40 միավոր,
- ստուգման արդյունքների ամփոփում գնահատման նշված բաղադրիչների արդյունքների հիման վրա և դասընթացի արդյունարար գնահատականի ձևավորում՝ առավելագույնը գումարային 100 միավոր:

### 14.2. Ուսանողների գիտելիքների ստուգում.

Դասընթացն ամփոփվում է քննությամբ:

Քննությամբ ամփոփվող դասընթացն ավարտվում է կիսամյակի 2 քննության միջոցով և մյուս բաղադրիչների գնահատումների արդյունքներով:

### 14.3. Հարցաշար (ըստ ծրագրի)

[14]«Վանաձորի Հ. Թումանյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի ուսանողների գիտելիքների ստուգման, գնահատման և հաշվառման կանոնակարգ» (ընդունված ՎՊՀ-ի գիտական խորհրդի կողմից 30.062022թ.),

1. Հունական մշակույթի գրավոր աղբյուրները
2. Կրետեական մշակույթը. հունական մշակույթի ակունքները
3. Կրետեական կրոնը
4. Միկենյան մշակույթը
5. Կրետե-միկենյան գիրը
6. Կրետե-միկենյան մշակույթի անկումը
7. «Մութ դարաշրջանի» հունական մշակույթը
8. Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը:
9. Հեքիաթները, առակները (Էսոպոս), հանելուկներն ու ասույթները:
10. Ժողովրդական երգերը, դրանց ծագումն ու ձևերը:
11. Հունական հերոսների մասին ավանդապատումներն ու երգերը. աեդոսներն ու ռապսոդները: Հոմերիդները
12. Տրոյական պատերազմի մասին ավանդությունը
13. «Իլիականի» և «Ոդիսականի» համառոտ բովանդակությունը
14. «Իլիականի» և «Ոդիսականի» պոեմների ընդհանուր բնույթը և գլխավոր կերպարները
15. Էպիկական ոճի առանձնահատկությունները
16. «Իլիական» և «Ոդիսական» պոեմների հեղինակի հարցը հնում և մեր օրերում
17. Պոեմի ստեղծման ժամանակը: Հոմերոսի ինքնության հարցը
18. Ցիկլյան պոեմներ, հոմերոսյան հիմներ, պարոդիաներ
19. Դիդակտիկ պոեմներ. Հեսիոդոսը և աշխատանքի գաղափարախոսությունը: Թեոգոնիա
20. Հունական մշակույթի «Արևելյան ոճի» ժամանակաշրջանը
21. Արխաիկ դարաշրջանի հունական ճարտարապետությունը. դորիական ոճը
22. Հունական ճարտարապետության էոլիական և հոնիական ոճերը
23. Արխաիկ դարաշրջանի հունական նկարչությունը
24. Հունական սափորանկարչության «սևապատկերյին ոճը»
25. Հունական սափորանկարչության «կարմրապատկեր ոճը»
26. Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ողղություններն ու դպրոցները
27. Արխաիկ դարաշրջանի հունական բարձրաքանդակը
28. Հունական քնարական պոեզիան և նրա ձևերը
29. Էլեգիան, յամբը և նրանց ներկայացուցիչները (Կալլինոս, Տիրթեոս, Արքիլոքոս, Սիմոնիդես Ամորգացի, Միմներմոս, Սոլոն, Թեոգնիդես)
30. Մելոսյան բանաստեղծություն (Ալքայոս, Սապֆո, Անակրեոն)
31. Խորային քնարերգությունը (խմբերգությունը). Պինդարոս
32. Գիտության և արձակ գրականության սկզբնավորումը
33. Հունական դրամայի առաջացումը և նրա տեսակները
34. Առաջին ողբերգակ բանաստեղծները և հունական ողբերգության ընդհանուր բնութագիրը
35. Հունական թատրոնի կառուցվածքը. դերասաններն ու հանդիսատեսը
36. Էսքիլեսն ու նրա ժամանակը
37. Էսքիլեսի ստեղծագործությունները
38. Էսքիլեսի սոցիալ-քաղաքական և հայրենասիրական պատկերացումները
39. Էսքիլեսի կրոնական և բարոյագիտական հայացքները

40. Ճակատագրի ու անհատի փոխհարաբերության հարցը Էսքիլեսի ստեղծագործության մեջ
41. Սոֆոկլեսի ստեղծագործությունները
42. Սոֆոկլեսի սոցիալ-քաղաքական հայացքները
43. Սոֆոկլեսի կրոնական և բարոյագիտական հայացքները
44. Ճակատագրի ու անհատի փոխհարաբերությունը Սոֆոկլեսի ստեղծագործություններում
45. Սոֆոկլեսի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
46. Էվրիպիդեսի ստեղծագործությունները
47. Էվրիպիդեսի սոցիալ-քաղաքական հայացքները
48. Էվրիպիդեսի կրոնական-բարոյագիտական հայացքները
49. Էվրիպիդեսի ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը
50. «Խիստ ոճի» դարաշրջանի հունական քանդակագործությունը
51. Զևսի օլիմպիական տաճարը
52. Ֆիդեասի դարաշրջանի հունական ճարտարապետությունը. Աթենքի ակրոպոլիսը
53. Ֆիդեասի դարաշրջանի հունական քանդակը
54. Ֆիդեասի դարաշրջանի հունական նկարչությունը
55. Հերոդոտոսն ու նրա «Մուսաները»: Հերոդոտոսի «Պատմության» գիտական և գեղարվեստական նշանակությունը:
56. Թուկիդիդեսն ու նրա պատմական աշխատությունը. Փաստարկվածություն, ռացիոնալիզմ, գեղարվեստական ուժ:
57. Քսենոֆոնն ու նրա աշխատությունները: Լակոնասիրությունն ու միապետական գաղափարները:
58. Քսենոֆոնի աշխատությունների պատմագեղարվեստական նշանակությունը:
59. Կտեսիաս Կնիդացի և Կրատտիպոս:
60. Իոն, Ստեսիմբրոտոս, Ֆիլիստոս և Տիմեոս
61. Ք.ա. IVդ. հունական ճարտարապետությունը
62. Ք.ա. IVդ. հունական քանդակագործությունը
63. Ք.ա. IVդ. հունական պատկերաքանդակը և նկարչությունը

<u>Ա) 1-ին ընթացիկ քննություն (կիսամյակի 9-10 շաբաթվա ընթացքում)</u>

- **Ընդգրկված թեմաները.**

| | ԹԵՄԱ |
|---|---|
| 1. | Հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները. |
| 2. | Կրետեական մշակույթը |
| 3. | Միկենյան մշակույթը |
| 4. | Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: §Մութ դարաշրջանի¦ հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը: |
| 5. | Հին հունական գրականության ակունքները: Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը |

| | |
|---|---|
| 6. | Հունական արվեստի §Արևելյան ոճի¦ ժամանակաշրջանը: |
| 7. | Արխաիկ դարաշրջանի հունական արվեստը: |
| 8. | Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները: |
| 9. | Հունական գրականությունը Ք.ա 7-5-րդ դարերում: |

- **Ընդգրկված հարցեր.**

- Հունական մշակույթի գրավոր աղբյուրները
- Կրետեական մշակույթը. հունական մշակույթի ակունքները
- Կրետեական կրոնը
- Միկենյան մշակույթը
- Կրետե-միկենյան գիրը
- Կրետե-միկենյան մշակույթի անկումը
- «Մութ դարաշրջանի» հունական մշակույթը
- Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը:
- Հեքիաթները, առակները (Էսոպոս), հանելուկներն ու ասույթները:
- Ժողովրդական երգերը, դրանց ծագումն ու ձևերը:
- Հունական հերոսների մասին ավանդապատումներն ու երգերը. աեդոսներն ու ռապսոդները: Հոմերիդները
- Տրոյական պատերազմի մասին ավանդությունը
- «Իլիականի» և «Ոդիսականի» համառոտ բովանդակությունը
- «Իլիականի» և «Ոդիսականի» պոեմների ընդհանուր բնույթը և գլխավոր կերպարները
- Էպիկական ոճի առանձնահատկությունները
- «Իլիական» և «Ոդիսական» պոեմների հեղինակի հարցը հնում և մեր օրերում
- Պոեմի ստեղծման ժամանակը: Հոմերոսի ինքնության հարցը
- Ցիկլյան պոեմներ, հոմերոսյան հիմներ, պարոդիաներ
- Դիդակտիկ պոեմներ. Հեսիոդոսը և աշխատանքի գաղափարախոսությունը: Թեոգոնիա
- Հունական մշակույթի «Արևելյան ոճի» ժամանակաշրջանը
- Արխաիկ դարաշրջանի հունական ճարտարապետությունը. դորիական ոճը
- Հունական ճարտարապետության էոլիական և հոնիական ոճերը
- Արխաիկ դարաշրջանի հունական նկարչությունը
- Հունական սափորանկարչության «սևապատկերային ոճը»
- Հունական սափորանկարչության «կարմրապատկեր ոճը»
- Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ողղություններն ու դպրոցները
- Արխաիկ դարաշրջանի հունական բարձրաքանդակը
- Հունական քնարական պոեզիան և նրա ձևերը
- Էլեգիան, յամբը և նրանց ներկայացուցիչները (Կալլինոս, Տիրթեոս, Արքիլոքոս, Սիմոնիդես Ամորգացի, Միմներմոս, Սոլոն, Թեոգնիդես)
- Մելոսյան բանաստեղծություն (Ալքայոս, Սապֆո, Անակրեոն)
- Խորային քնարերգությունը (խմբերգությունը). Պինդարոս
- 

Բ) 2-րդ ընթացիկ քննություն (կիսամյակի 19-20 շաբաթվա ընթացքում)

- **Ընդգրկվող թեմաները.**

-

| | ԹԵՄԱ |
|---|---|
| 1. | Դասական դարաշրջանի հունական արվեստը: |
| 2. | §Ֆիդեասի դարաշրջան¦-ի հունական ճարտարապետությունն ու արվեստը |
| 3. | Հունական դրամատուրգիայի §ոսկեդարը¦: |
| 4. | Ք.ա. 4-րդ դարի հունական արվեստը: |
| 5. | Դասական դարաշրջանի հունական պատմական արձակը: |
| 6. | Հունական մշակույթի կերպափոխությունը հելլենիստական դարաշրջանում |

- **Ընդգրկված հարցեր.**

- Գիտության և արձակ գրականության սկզբնավորումը
- Հունական դրամայի առաջացումը և նրա տեսակները
- Առաջին ողբերգակ բանաստեղծները և հունական ողբերգության ընդհանուր բնութագիրը
- Հունական թատրոնի կառուցվածքը. դերասաններն ու հանդիսատեսը
- Էսքիլեսն ու նրա ժամանակը
- Էսքիլեսի ստեղծագործությունները
- Էսքիլեսի սոցիալ-քաղաքական և հայրենասիրական պատկերացումները
- Էսքիլեսի կրոնական և բարոյագիտական հայացքները
- Ճակատագրի ու անհատի փոխհարաբերության հարցը Էսքիլեսի ստեղծագործության մեջ
- Սոֆոկլեսի ստեղծագործությունները
- Սոֆոկլեսի սոցիալ-քաղաքական հայացքները
- Սոֆոկլեսի կրոնական և բարոյագիտական հայացքները
- Ճակատագրի ու անհատի փոխհարաբերությունը Սոֆոկլեսի ստեղծագործություններում
- Սոֆոկլեսի ստեղծագործության ընդհանուր բնութագիրը
- Էվրիպիդեսի ստեղծագործությունները
- Էվրիպիդեսի սոցիալ-քաղաքական հայացքները
- Էվրիպիդեսի կրոնական-բարոյագիտական հայացքները
- Էվրիպիդեսի ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը
- «Խիստ ոճի» դարաշրջանի հունական քանդակագործությունը
- Զևսի օլիմպիական տաճարը
- Ֆիդեասի դարաշրջանի հունական ճարտարապետությունը. Աթենքի ակրոպոլիսը
- Ֆիդեասի դարաշրջանի հունական քանդակը
- Ֆիդեասի դարաշրջանի հունական նկարչությունը
- Հերոդոտոսն ու նրա «Մուսաները»: Հերոդոտոսի «Պատմության» գիտական և գեղարվեստական նշանակությունը:
- Թուկիդիդեսն ու նրա պատմական աշխատությունը. Փաստարկվածություն, ռացիոնալիզմ, գեղարվեստական ուժ:
- Քսենոֆոնն ու նրա աշխատությունները: Լակոնասիրությունն ու միապետական գաղափարները:
- Քսենոֆոնի աշխատությունների պատմագեղարվեստական նշանակությունը:

- Կտեսիաս Կնիդացի և Կրատտիպոս:
- Իոն, Ստեսիմբրոտոս, Ֆիլիստոս և Տիմեոս
- Ք.ա. IVդ. հունական ճարտարապետությունը
- Ք.ա. IVդ. հունական քանդակագործությունը
- Ք.ա. IVդ. հունական պատկերաքանդակը և նկարչությունը

**Գնահատման չափանիշները[15].**

- Սեմինար պարապմունքներին ուսանողը գնահատվում է գումարային առավելագույնը 40 միավոր, ստուգումների քանակը՝ 4, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր:
- Ինքնուրույն աշխատանք- կիսամյակի ընթացքում հանձնարարվում է 1-2 ինքնուրույն աշխատանք:
- Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր, ընթացիկ ստուգումներն անց են կացվում բանավոր /15 հարց/:

[15] Լրացվում է ըստ ամբիոնի /դասախոսի որոշման

«ՎԱՆԱՁՈՐԻ Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

# ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

**Մասնագիտություն՝** __022201.00.7 Պատմություն____________

/դասիչ, մասնագիտության լրիվ անվանումը/

**Կրթական ծրագիր՝** ___022201.01.7 Պատմություն _______________

/դասիչ, կրթական ծրագրի լրիվ անվանումը/

**Որակավորման աստիճան՝** ___________մագիստրատուրա___________________

/բակալավր, մագիստրատուրա/

Վանաձոր 2023

Առկա ուսուցման համակարգ

<table>
<tr><td>Դասընթացի թվանիշը, անվանումը</td><td colspan="4">Պ/մ-002 Հին հունական մշակույթի գենեզիսը</td></tr>
<tr><td>Դասընթացին հատկացվող կրեդիտը</td><td colspan="4">5 կրեդիտ</td></tr>
<tr><td>Ուսումնառության տարի / կիսամյակ</td><td colspan="4">1-ին տարի, 1-ին կիսամյակ</td></tr>
<tr><td rowspan="6">Ժամերի բաշխումը</td><td rowspan="4">Լսարանային</td><td rowspan="4">60</td><td>Դասախոսություն</td><td>42</td></tr>
<tr><td>Սեմինար</td><td>18</td></tr>
<tr><td>Լաբորատոր աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Գործնական աշխատանք</td><td></td></tr>
<tr><td>Ինքնուրույն</td><td colspan="3">90</td></tr>
<tr><td>Ընդամենը</td><td colspan="3">150</td></tr>
<tr><td>Ստուգման ձևը</td><td colspan="4">Ընթացիկ քննություն</td></tr>
<tr><td>Դասընթացի նպատակը</td><td colspan="4">Դասընթացի նպատակն է.<br>▪ Հին հունական մշակույթի սկզբնավորման և զարգացման օրինաչափություննների վերաբերյալ գիտելիքների փոխանցում ուսանողներին:<br>▪ Ուսանողների մոտ հին հունական մշակույթի հետազոտության շրջանակներում հմտությունների և կարողությունների ձևավորում:<br>▪ Հին մշակույթների համեմատության և վերլուծելու ունակությունների ձեռքբերում ուսանողների կողմից:<br>▪ Տարբեր իրավիճակներում հին հունական մշակութային փորձը վերլուծելու կարողությունների ձևավորում:</td></tr>
<tr><td>Դասընթացի վերջնարդյունքները</td><td colspan="4">«Հին հունական մշակույթի գենեզիսը» դասընթացի ուսումնասիրման արդյունքում ուսանողի ակնկալվող վերջնարդյունքներն են.<br>1. իմանա հին հունական մշակույթի պատմության տեսական հիմունքները,<br>2. իմանա հին հունական մշակույթի ուսումնասիրման մեթոդական հիմքները,<br>կարողանա ձեռք բերած տեսական գիտելիքները կիրառել գործնականում՝ պատմամշակութային իրողությունները հասկանալու, փաստերն ու երևույթները համեմատելու,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| | մշակույթի զարգացման փուլերն ու դրանց օրինաչափությունները համադրելու և համակողմանի գնահատելու, վերլուծելու, դիրքորոշումներ ձևակերպելու համար,<br>3. կարողանա համադրել անտիկ մշակույթի պատմության տարբեր շրջափուլերում ի հայտ եկած քաղաքական, տնտեսական, հասարակական-պետական ազդակներ դերը, մշակութային կառույցներն ու գաղափարաբանությունները, վեր հանել դրանց փոխակերպությունների և մշակութային համալիրում արտահայտվելու առանձնահատկությունները,<br>4. կարողանա համակարգել հին հունական մշակույթի վերաբերյալ բազմաբնույթ գիտելիքները, դրանք ենթարկել տեսական վերլուծության, փաստարկել սեփական դիրքորոշումը և կատարել ինքնուրույն հետևություններ,<br>5. կարողանա վերլուծել մշակութային գործընթացները, դրանց տրամաբանությունը, օրինաչափությունները, ոճերի ու միտումների հարափոփոխի պատճառա-հետևանքային կապերը,<br>6. կարողանա ձևավորել դիրքորոշումներ անտիկ մշակույթի պատմության հիմնախնդիրների նկատմամբ և կատարել դրանց հետազոտություն: |
| **Դասընթացի բովանդակությունը** | Թեմա 1. Հունական մշակույթի ուսումնասիրության սկզբնաղբյուրները., Թեմա 2. Կրետեական մշակույթը, Թեմա 3. Միկենյան մշակույթը, Թեմա 4. Կրետե-միկենյան քաղաքակրթության անկումը: §Մութ դարաշրջանի¦ հունական մշակույթն ու նրա ծագումնաբանության հարցը, Թեմա 5. Հին հունական գրականության ակունքները: Ժողովրդական-պոետիկ ստեղծագործությունն ու առասպելաբանությունը, Թեմա 6. Հունական արվեստի §Արևելյան ոճի¦ ժամանակաշրջանը, Թեմա 7. Արխաիկ դարաշրջանի հունական արվեստը, Թեմա 8. Արխաիկ դարաշրջանի հունական քանդակագործությունը, նրա ուղղություններն ու դպրոցները, Թեմա 9. Հունական գրականությունը Ք.ա 7-5-րդ դարերում, Թեմա 10. Դասական դարաշրջանի հունական արվեստը, Թեմա 11. Ֆիդիասի դարաշրջանի հունական ճարտարապետությունն ու արվեստը, Թեմա 12. Հունական դրամատուրգիայի ոսկեդարը, թեմա 13. Ք.ա. 4-րդ դ. հունական արվեստը, Թեմա 14. Դասական դարաշրջանի հունական արձակը, Թեմա 15. Հունական մշակույթի կերպափոխությունը հելլենիստական դարաշրջանում |
| **Գնահատման** | • Սեմինար պարապմունքներ- գումարային 40 միավոր, |

| | |
|---|---|
| **մեթոդները և չափանիշները** | ստուգումների քանակը՝ 4, յուրաքանչյուրը՝ առավելագույնը 10 միավոր<br>• Ինքնուրույն աշխատանք- կիսամյակի ընթացքում հանձնարարվում է 1-2 ինքնուրույն աշխատանք, գումարային 20 միավոր:<br>• Ընթացիկ ստուգումներից յուրաքանչյուրը գնահատվում է առավելագույնը 20 միավոր, ընթացիկ ստուգումներն անց են կացվում բանավոր: |
| **Գրականություն** | Պարտադիր- 1-27<br><br>Լրացուցիչ- 1-13 |